**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ <<ՀՐԱՇՔ>> Մ/ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ**

ՀՀ,Կոտայքի մարզ, ք. Չարենցավան
6-րդ թաղ. 1-ին փողոց ,թիվ 1
Հեռախոս 0226 4-34-12

**<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2>> ծածկագրով**
**շրջանակային համաձայնագրերի միջոցով**
**գնում կատարելու ընթացակարգի**
**հնարավոր մասնակիցների ղեկավարներին**

Ելից **N 22**
***18 մարտի 2015թ.***

**Հարգելի՛ Մասնակից,**

<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2>> ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Չարենցավան համայնքի <<Հրաշք>> մ/մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքներ:

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում <<ՉՔ-ՀՄՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2>>:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք. Չարենցավան, 6-րդ թաղամաս 1-ին փողոց թիվ 1 հասցեով, մինչև 2015թ. մարտի 30-ը, ժամը $10^{00}$-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է գրանցամատյանի վարման պատասխանատու Լ. Մանուկյանը: Հայտերը գրանցամատյանի վարման պատասխանատուի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն Չարենցավան համայնքի <<Հրաշք>> մ/մանկապարտեզ ՀՈԱԿ-ի շենքում, ք. Չարենցավան, 6-րդ թաղամաս 1-ին փողոց թիվ 1 հասցեով, 2015 թվականի մարտի 30-ին, ժամը $10^{00}$-ին:

Գնման առարկա է հանդիսանում Չարենցավան համայնքի <<Հրաշք>> մ/մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կարիքների համար՝ սննդամթերքի ձեռքբերումը:

Չարենցավան համայնքի <<Հրաշք>> մ/մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կարիքների համար՝ սննդամթերքի մատակարարման տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N 3 Հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N 1), ընդ որում, պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված N 2): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Չարենցավան համայնքի <<Հրաշք>> մ/մանկապարտեզ ՀՈԱԿ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ gnumnerlusavan@mail.ru:

Հարգանքներով՝

ՏՆՕՐԵՆ Կ. ԽԵԴՈՅԱՆ